Համագործակցության հուշագիր

Հոկտեմբերի 19, 2019

Եվրասիա համագործակցություն հիմնադրամի հյուսիսային մասնաճյուղը (այսուհետ՝ ԵՀՀ ՀՄ)՝ Իջևան Ինֆոտուն ծրագրի շրջանակներում, մի կողմից, և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղը (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ), մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.
Առաջիկայում հանդես գալ, որպես գործընկերներ և միմյանց հետ համագործակցելով իրականացնել ոչ ֆորմալ կրթական միջոցառումներ՝ դասընթացներ, քննարկումներ ուղղված ուսանողների մասնագիտական և անձնային աճին: Առանձնակի ուշադրություն կդարձվի նաև ուսանողների շրջանում անգլերեն լեզվի կարողությունների զարգացմանը:
Որպես հիմնական հարթակ օգտագործվելու է Անգլերենի ռեսուրս կենտրոնը:

Կողմերը համաձայնում են համագործակցել միմյանց հետ և պատրաստակամություն են հայտնում իրականացնել հետևյալ գործողությունները.

ԵՀՀ ՀՄ

- Ըստ ուսանողների կարիքների նախաձեռնել և իրականացնել միջոցառումներ
- Ներգրավել փորձագետներ ԵՀՀ-ից, ԵՀՀ ՀՄ-ից, Խաղաղության կորպուսից և այլ գործընկեր կառույցներից:

ԵՊՀ ԻՄ

- Աջակցել ուսանողների կարիքների գնահատման աշխատանքներում,
- Աջակցել կազմակերպչական գործողությունների իրականացմանը,
- Իրականացնել իրազեկման աշխատանքներ,
- Ներգրավել ուսանողներին իրականացվող միջոցառումներին
- Տրամադրել Անգլերեն լեզվի ռեսուրս կենտրոնը և անհրաժեշտության դեպքում նաև տեխնիկա

Հուշագրի ժամկետը
Սույն հուշագիրն ուժի մեջ է մտնում 2019թ.-ի հոկտեմբերի 19-ից և գործում է մինչ 2020թ.-ի մայիսի 25-ը:

Վարսիկ Ներկարարյան ԵՀՀ ՀՄ ծրագրերի ղեկավար	ստորագրություն	19.10.2019 ամսաթիվ
Անուշավան Հայկարամի Մակարյան ԵՊՀ ԻՄ տնօրեն	ստորագրություն	19.10.2019 ամսաթիվ